



Ամասիա

Նախկինում Ամասիայի տարածաշրջանի շրջկենտրոն, մարզկենտրոնից գտնվում է 44 կմ հյուսիս-արևելք: Նախկինում ունեցել է Համասիտ, Ղուկասյան, Ներքին

Ղուկասյան անվանումները: Գյուղը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1870մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները:

Ամասիայից 2կմ արևմուտք կա հին գյուղատեղի, որը տեղացիները անվանում են Թարաբալար: Ըստ բնակիչների պատմածի այդ գյուղի բնակիչները եղել են հույներ:

Գյուղից հյուսիս-արևմուտք Զաթին դարա կոչված բերդի ավերակներն են:

Բնակչության նախնիների մի մասը տեղափոխվել են 1829 թ-ին Արևմտյան Հայաստանից՝ Բասենից և Կարսի մարզից: 1886 թ-ին գյուղն ունեցել է 274, 1914 թ-ին՝ 564, 1931 թ-ին՝ 645, 1959 թ-ին՝ 1527, 1970 թ-ին՝ 2773, 1980 թ-ին՝ 3175 հայ բնակիչ:

Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 1896 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 28%, աշխատունակներ՝ 54 %, հետաշխատունակներ՝ 18%: Ունի 114 տնտեսություն: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մանկապարտեզ, հիվանդանոց, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 311հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, խոտհարքեր՝ կազմելով

համապատասխանաբար 262, 1333, 600 հեկտար: Գյուղատնտեսության

մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է: Զբաղվում

են հացահատիկային, կարտոֆիլի, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են նաև թռչնաբուծությամբ:

Ունի պանրի գործարան, որտեղ արտադրվում են «Լոռի», «Չանախ» պանիրներ և արտադրանքը սպառվում է ինչպես մարզի, այնպես էլ մարզի սահմաններից դուրս: 2011 թվականին համայնքում բացվեց Հայ - Գերմանական համատեղ կարի արտադրամաս, որը լուծեց կարևորագույն հարցերից մեկի՝ աշխատատեղերի հարց: Կարի արտադրամասում աշխատանքով ապահովվել է շուրջ 70 մարդ, որը ավելանալու միտում ունի: Համայնքում բացվեց նաև Համայնքային կենտրոն, որը երիտասարդության համար ժամանցի լավագույն կենտրոններից մեկն է, կենտրոնի հարևանությամբ բացվեց նաև մանկապարտեզ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, համայնքում գազիֆիկացման հարցը լուծված է:

Բնակչություն


Նախնիները 1829թ. գաղթել են Բասենից, Կարսից և այլ տեղերից:

Ամասիայի ազգաբնակչության փոփոխությունը.^[4]

Տարի	1886	1914	1931	1959	1970	1980	2001	2004
Բնակիչ	274	564	645	1527	2773	3175	1878	1941

Պատմամշակութային կառույցներ

Ամասիայից հյուսիս-արևմուտք է գտնվում «Ամրաձոր» [ամրոցը](#):

Երկիր	 Հայաստան
Մարզ	Շիրակի
Այլ անվանումներ	Ղուկասավան
Մակերես	30.9 կմ ²
Բարձրություն ծովի մակարդակից	1870 մ
Խոսվող լեզուներ	Հայերեն
Բնակչություն	2210 ^[1] մարդ(2012)
Ազգային կազմ	Հայեր
	Հայ
Կրոնական կազմ	Առաքելական եկեղեցի
Ժամային գոտի	UTC+4
Հեռախոսային կոդ	+374 245 ^[2]
Փոստային ինդեքս	2701 ^[3]